

ԾՇօ․ áÛ<sup>1</sup> Á ê¿Ý ì ÇùÃáñ  
≈ Ýì » ë<sup>3</sup> Ý » ÉÇ È á Ûë Ç  
» ñ » ù ù ñ » ñÁ



Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

Ê Ø ´ ² ¶ ð à ô Â ° ² Û Î à Õ Ø Æ ò

*Սիրելի Ընթերցող,*

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.*

**[gradaran@mashtoz.org](mailto:gradaran@mashtoz.org)**

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Ø³bi áó ì ³Ñ; Ô³½³ñ»³Ý

## Մերածույթիւն

Հիւզոյի՝ Փարիզի Սէն Վիքթոր կղերիկոսարանի ուսուցչի եւ մեծագոյն ներկայացուցիչներէից մէկի կեանքը († 11 Փետրուար 1141ին, մօտ 45 տարեկան հասակում) ընթացել է մի ժամանակաշրջանում, որն հաւատարիմ պահպանն էր աւանդութեան, բայց միաժամանակ լի էր սպասումներով ու խոստումներով: Հիւզոն, որն հաւանաբար ծնուել էր Սաքսոնիայի իշխանական ընտանիքներէից մէկում, ծնողների կողմից առաքուել էր ուսանելու Համբըրչլէբընի Սբ. Փանքրացիոսի վանքում, ուր երիտասարդը որոշել էր նուիրուել կրօնաւորական կեանքին: Հալբըրչտադթի եպիսկոպոսը, որն իր հօրեղբայրն էր, նրան ուղարկել էր Փարիզ, Հենրիկոս Հինգերորդ կայսեր գօրքերի ներխուժումից ազատելու համար: Փարիզում Հիւզոյի ներկայութեան առաջին հաւաստի թուականը, որն ունենք, 1127ն է, բայց իր ժամանումը պէտք է տեղադրենք անշուշտ մի քանի տարի առաջ, առնուազն 1115ի մօտ: Հասնելով Փարիզ, երիտասարդը բնակութիւն է հաստատում Սէն Վիքթորի վանքում, որն հիմնուել էր տակաւին մի քանի տարի առաջ, Յուլիէլմոս Շամփէօյի կողմից: Վերջինս, որ տրամախօսութեան եւ հռետորութեան դասախօս էր Նոթր Դամի դպրոցում, հրաժարուել էր ուսուցչական իր բոլոր պաշտօններէից եւ իր մի քանի աշակերտների հետ միասին, 1108 թուականին, քաշուել էր ապրելու Սբ. Վիքթոր մարտիրոսին նուիրուած այդ ճգնարանում, որ գտնուում էր Փարիզից ոչ շատ հեռու, Սէնայի ձախ ափին: Բազմաթիւ անձինք բազմաթիւ անգամներ խնդրեցին Յուլիէլմոսին վերադառնալ եւ շարունակել դասախօսութիւնները, բայց աւետարանական արմատականութեան սիրահար լինելով, նա այլեւս երբեք չվերադարձաւ Նոթր Դամ, այլ իր ճգնարանում իսկ կեանք տուեց մի նոր դպրոցի: 1113 թուականին, սակայն, Լիւդովիկոս Վեցերորդի միջամտութեամբ ձեռնադրուեց Շալոնի եպիսկոպոս: Վանական հասարակութեան առաջնորդութիւնը յանձնուեց Ժիլդուինոյին († 1155), որի աբբայութեան ընթացքում վիքթորեան դպրոցը հասաւ իր պայծառութեան գագաթնակէտին: Վիքթորեանները աբեղաներ էին, որ վարում էին հասարակաց մի կեանք՝ Սբ. Օգոստինոսի կանոնների համաձայն, եւ նուիրուած էին քարոզչութեանը: Հասարակաց կեանքի եւ ժամերգութիւնների կառուցուածքը հետեւում էր Քլունիի բենեդիկտեանների աւանդութեանը, մինչ նիւթական աշխատանքը, որն էական եւ յատկանշական տարրն է վանական կեանքի, ամբողջովին փոխարինուած էր մտային աշխատանքով:

Հիւզոն ամբողջովին իւրացնում է իր ժամանակի հոգեւոր, մշակութային ու մարդկային խանդավառութիւնն ու չլուծուած հարցականները եւ իր բազմաթիւ դասախօսութիւններով ու գրութիւններով ջանում է պատասխաններ տալ այն մտատանջումներին, որոնք ալեկոծում էին իր եւ իր ժամանակակիցների հոգին: Այդ գործի իրականացման համար ներդնում է իր մեկնաբանական ու աստուածաբանական բոլոր կարողութիւնները, այնքան որ իր ժամանակակիցների կողմից արդէն անուանուում է «երկրորդ Օգոստինոս»:

Սէն Վիքթորում Հիւզոն ուսանում է իմաստասիրութիւն եւ աստուածաբանութիւն, հետագայում ինքը նոյնպէս նուիրուելով ուսուցչութեանը: Հանրագիտական մշակոյթի տէր լինելով, այդուամենայնիւ սակաւ տեղեակ էր հին լեզուներին. գիտէր մի քիչ յունարէն եւ թերեւս մի քանի բան եբրայեցերէնից: Մեծապէս հետաքրքրուած էր հրեական մեկնողական գիտութիւններով, որոնց ծանօթանում էր շնորհիւ հիւսիսային Տրանսիայի նշանաւոր ուսուցիչների. Ռաշի, Քարա եւ Ռաշամ: Այս տեսանկիւնից դիտուած, Աստուածաշնչի մեկնաբանութեան համար հրեական աղբիւրներին դիմելու կարեւորութիւնը պաշտպանելով, Հիւզոն կարեւոր զարկ տուեց աստուածաշնչեան

մեկնողական գիտութիւնների զարգացմանը, թէեւ այս գործում աւելի կարեւոր եղաւ նրանով՝ ինչին որ սկիզբ տուեց, քան նրանով՝ ինչը որ ինքն անձամբ արեց:

Ինչ վերաբերուում է աղբիւրներին, հեղինակը՝ որի մեծագոյն արձագանքն է Հիւզոն, անկասկած Օգոստինոսն է, որին հետեւում է Կեղծ Դիոնիսիոսը: Բայց Հիւզոյի ընդարձակագոյն գիտութիւնը տարածուում է Յոյն Հայրերից մինչեւ Լատինները, վանական հեղինակներից մինչեւ իմաստասէրներն ու բանաստեղծները:

Լինելով Աստուածաշնչի սիրահար, աւանդութեանը խորապէս ծանօթ, եռանդուն քննող այն ամէնի՝ որ մարդկային է, Հիւզոն իր ուշադրութիւնն ու հայեցողութիւնը տարածում է ամբողջ տիեզերքի, ամբողջ արարչութեան վրայ, վերջինիս փարուելով մի խորհրդածող հայեացքով, որը միաժամանակ լի է հիացումով ու փափաքով. հիացում՝ ստացած պարգեւի սքանչելիութեանն ի տես, փափաք՝ այդ պարգեւի շուրջ միշտ աւելի խորը ծանօթութեան, որպէսզի արարածների ճանաչումն առաջնորդի մեզ Արարչի ընկալմանը, իսկ Արարչի ճանաչումն իրական ու անսխալ դարձնի արարածների հետ ունեցած մեր կենսական յարաբերութիւնները: Սա է ահա այն ուղին, որով Հիւզոն մեզ առաջնորդում է իր այս գրութեան մէջ, որից ընտրեալ հատուածներ ենք հրատարակում այստեղ, մի գործ՝ որը նա շարադրել է 1123-1126 թուականներին, հաւանաբար պատասխանելու համար Աբէլարդոսի կողմից Երրորդութեան շուրջ յարուցուած հակաճառումներին: Քննարկումները սկսելով Աստուծոյ ստորոգութիւններից (գորութիւն, իմաստութիւն եւ բարութիւն), որոնք հնարաւոր է ճանաչել արարչութեան միջոցով, Հիւզոն ընթերցողին առաջնորդում է զմայլուելու ներ-երրորդութեանական (երրորդութեան ներսումներկայ) սիրոյ կեանքով, մարդու հանդէպ Աստուծոյ սիրով, ինչպէս որ այդ սէրը բացայայտում է Որդու մահուան եւ յարութեան խորհրդի մէջ (անտեսանելի լոյսի երեք օրերը համապատասխանում են Տիրոջ մահուան, թաղման եւ յարութեան երեք օրերին), եւ ինչպէս որ այսօր այդ սէրը բնակւում է հաւատացեալների սրտում: Որդու մարդեղութեան խորհուրդը արարչագործութեան մի մասն է եւ գազաթնակէտը:

Երկուսն են Աստուծոյ այն գործերը, որոնցում ամփոփուած են միւս բոլորը. առաջինը արարչագործութիւնն է, որով ստեղծուեցին այն բաները՝ որոնք գոյութիւն չունէին. երկրորդը փրկագործութիւնն է, որով փրկուեցին նրանք՝ ովքեր մեռած էին: Արարչագործութիւնը աշխարհի ստեղծումն է իր բոլոր տարրերով. փրկագործութիւնը Խօսքի մարդեղութիւնն է յարակից բոլոր իրադարձութիւններով, լինեն դրանք աշխարհի սկզբից մինչեւ մարդեղութիւն կատարուածները, թէ մարդեղութիւնից յետոյ մինչեւ աշխարհի վախճանը կատարուելիքները<sup>1</sup>:

Մարդեղութիւնը, հետեւաբար, ա՛յլ բան չէ, եթէ ոչ՝ արարչագործութիւնը կատարելութեան հասցնելը, ոտքի կանգնեցնելով այն՝ ինչ ընկած էր, նորոգելով այն՝ ինչ եղծուած էր, ամբողջացնելով սկսուած գործը, մինչեւ մարդկանց առաջնորդելը Որդու՝ մարդացած Խօսքի հետ լիակատար կերպարանակցութեանը, շնորհիւ այն ընթացքի՝ որը Տէրը մարդկանց հետ քայլում է այս աշխարհում:

<sup>1</sup> De scriptoris et scriptoribus sacris, II.

# ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԼՈՅՍԻ ԵՐԵՔ ՕՐԵՐԸ

## 1. ՉԾՁԻ ԸՅԻՆՈՒՄ , 3/4ՏՁԻ ՉԾՁԻ

### ա) Արարչութիւնը բացայայտում է Արարչի յատկութիւնները

«Աստուծոյ անտեսանելի յատկութիւնները ճանաչուած են արարչութեան միջոցով»<sup>1</sup>: Երեքն են Աստուծոյ անտեսանելի յատկութիւնները. գորութիւնը, իմաստութիւնը, բարութիւնը: Արանցից է բխում ամէն բան, սրանցով գոյութիւն ունի ամէն բան, սրանց միջոցով է տնօրինուած ամէն բան: Զորութիւնը ստեղծուած է, իմաստութիւնը՝ կառավարուած, բարութիւնը՝ պահպանուած: Այս երեք իրողութիւնները, սակայն, ինչպէս որ աննկարագրելիօրէն մէկ իրականութիւն են Աստուծոյ մէջ, այնպէս էլ երբեք չեն կարող միմեանցից բաժանուել գործելու ընթացքում. գորութիւնը, բարութեան միջոցով, ստեղծուած է իմաստութեամբ. իմաստութիւնը, գորութեան միջոցով, կառավարուած է բարութեամբ. բարութիւնը, իմաստութեան միջոցով, պահպանուած է գորութեամբ: Արարածների վիթխարի քանակը բացայայտում է գորութիւնը, գեղեցկութիւնը՝ իմաստութիւնը, օգտակարութիւնը՝ բարութիւնը: ...

Արդ ... ուշադրութեամբ քննենք՝ թէ ինչպէս է արարածների վիթխարի քանակի շնորհիւ բացայայտուած գորութիւնը, գեղեցկութեան շնորհիւ՝ իմաստութիւնը, իսկ օգտակարութեան շնորհիւ՝ բարութիւնը: ...

Ունկնդրենք, ուրեմն, ջանասիրութեամբ, եւ խորհրդածենք այն ամէնի շուրջ, որն այժմ ներկայացնելու եմ:

### բ) Զօրութիւնը

Ինչպիսի՞ն էր այն գորութիւնը, որի շնորհիւ գոյութեան էր կանչուելու ամէն բան, մինչ ոչինչ գոյութիւն չուներ: Ո՞ր միտքը կարող է ըմբռնել՝ թէ որքան գորութիւն է հարկաւոր մի բան ստեղծելու համար: Նոյնիսկ ինչ որ մի բան, որքան էլ փոքր որ լինի: Եթէ, ուրեմն, ինչ որ մի փոքրիկ բան անգամ ստեղծելու համար անհրաժեշտ գորութիւնն անըմբռնելի է, քանիցս առաւել մեծ պէտք է համարուի այն գորութիւնը, որը ստեղծել է արարածների մի այսպիսի հսկայական բազմութիւն: Ինչպիսի՞ բազմութիւն: Քանի՞սն են: Հաշուիր երկնքի աստղերը, ծովի աւազը, երկրի փոշին, անձրեւի կաթիլները, թռչունների փետուրները, ձկների թեփուկները, կենդանիների մազերը, դաշտերի խոտերը, ծառերի տերեւներն ու պտուղները, եւ այսպէս՝ միւս բոլոր անհաշուելի գոյութիւնները: ...

Բայց թերեւս նա՞ ով ստեղծել է այս բոլոր գոյութիւնները, ստեղծել է դրանք փոքրիկ եւ չի կարողացել միաժամանակ ստեղծել նաեւ բազմաքանակ եւ մեծ գոյութիւններ:

Եւ սակայն, որքա՞ն մեծ են: Չափիր լեռների գանգուածը, գետերի ընթացքը, դաշտերի տարածքը, երկնքի բարձրութիւնը, անդունդի խորութիւնը: Զարմանում ես, որ ուժերդ չեն բաւարարում. բայց աւելի ճիշտն այն է, որ քանի որ ուժերդ չեն բաւարարում, դրա համար էլ կարողանում ես զարմանալ սրանցով:

Բոլոր նրանց համար՝ ովքեր խորհրդածուած են արարածների վիթխարի բազմութեան շուրջ, օրինակներ տրուեցին սերմնացանի նման<sup>2</sup>: Այժմ անցնում ենք քննելու նրանց գեղեցկութիւնը:

<sup>1</sup> Հում 1, 20

<sup>2</sup> Հմմտ. Ղկա 8, 4-15

գ) Գեղեցկությունը

Թէեւ արարածների գեղեցկութիւնը բազում եւ զանազան կերպերով է ներկայանում որպէս կատարեալ, այնուամենայնիւ յատկապէս չորս իրողութիւններում է կայանում նրանց գեղեցկութիւնը: Այսինքն՝ ըստ տեղի, շարժման, տեսքի եւ որակի: Եւ անշուշտ, եթէ մէկն ի վիճակի լինէր մինչեւ խորքը քննելու սրանք, սրանցում կը բացայայտէր Աստծոյ իմաստութեան զարմանահրաշ լոյսը: Եւ թող որ ես գէթ այնքան կարողանամ քննել այս իրողութիւնները, գէթ այնքան պատշաճօրէն պատմեմ, որքան որ բոցավառ կերպով ի գորու եմ դրանք սիրելու: Սա, իրօք, ուրախացնում է ինձ, որովհետեւ գերագոյն աստիճանի քաղցր ու հաճելի է յաճախակի մտածելն այսպիսի հարցերի շուրջ, որոնցում միաժամանակ՝ իմաստը բացայայտում է բանականութեան կողմից, հոգին բերկրում է անուշուրթեամբ եւ զգացումները յուզում են մրցակցութեամբ, այնպէս՝ որ Սաղմոսերգուի հետ, ապշանքով ու զարմանքով լի, աղաղակում ենք. «Քանի՛ցս սքանչելի են գործերդ, Տէր, ամէն բան ստեղծել ես իմաստութեամբ»<sup>1</sup>: «Ուրախացնում ես ինձ արարչութեամբդ եւ ես ցնծում եմ ձեռքերիդ գործերով: Քանի՛ցս սքանչելի են գործերդ, Տէր: Չափազանց խորն են մտքերդ: Անմիտ մարդը չի կարող ճանաչել դրանք եւ յիմարը չի կարող ըմբռնել»<sup>2</sup>:

Այս ամբողջ զգալի աշխարհը կարծես թէ Աստծոյ գրքից արտագրուած գիրք է, այսինքն՝ աստուածային զօրութեան կողմից ստեղծուած, իսկ արարածներից իւրաքանչիւրը կարծես թէ մարդու կողմից ազատ քմահաճոյքով յօրինուած պատկերներ չեն, այլ հաստատուած են աստուածային վճիռով, որպէսզի բացայայտեն եւ որոշակի կերպով մատնանշեն Աստծոյ անտեսանելի յատկութիւնների իմաստութիւնը: Միեւնոյն եղանակով, ապա, ինչպէս անգրագէտ մարդը տեսնում է բացուած մի գիրք եւ տեսնում է նշաններ՝ առանց ճանաչելու տառերը, այդպիսին է նաեւ յիմար եւ շնչաւոր մարդու<sup>3</sup> պարագան, որը չունի Աստծոյ իրականութիւնների զգացումը<sup>4</sup>, տեսանելի այս արարածներում նշմարում է միայն արտաքին կերպարանքը, առանց ինքն իր ներսում ըմբռնելու իմաստը: Նա, մինչդեռ, ով հոգեւոր է եւ ի վիճակի է զանազանելու ամէն բան<sup>5</sup>, մինչ արտաքուստ տեսնում է գործի գեղեցկութիւնը՝ իր ներաշխարհում գմայլում է Արարչի իմաստութեամբ: Հետեւաբար, չկայ ոչ ոք, որի համար Աստծոյ գործերը գմայլելի չեն. մինչ անմիտը գմայլում է միայն արտաքին կերպարանքով, իմաստունը, այն ամէնի շնորհիւ՝ որ տեսնում է արտաքուստ, ըմբռնում է աստուածային իմաստութեան խորին դիտաւորութիւնը, ինչպէս եթէ մէկ եւ միեւնոյն գրութեան մէջ առաջինը ուղղորդութիւնը կենտրոնացնէր նշանների գոյնի ու գեղագրութեան վրայ, մինչ երկրորդը գովէր նրանց իմաստն ու արժէքը:

Բարի իրողութիւն է, ուրեմն, աստուածային գործերի ուղադիր զննումն ու դրանցով հիանալը, բայց միայն նրանց համար՝ ովքեր սովորել են մարմնեղէն գոյութիւնների գեղեցկութիւնը վայելել հոգեւոր օգուտ ստանալու նպատակով: Նաեւ այս պատճառով է, որ Աստուածաշունչը մեծապէս պնդում եւ մեզ մղում է քննելու Աստծոյ զարմանահրաշ գործերը. որպէսզի այն ամէնի միջոցով, որ տեսնում ենք դրսում, կարողանանք մեր ներսում հասնել ճշմարտութեան ճանաչմանը: Ահա Սաղմոսերգուն նոյնպէս որպէս մեծ

<sup>1</sup> Սղմ 104, 24  
<sup>2</sup> Սղմ 92, 5-7  
<sup>3</sup> «Շնչաւոր մարդ» արտայայտութեամբ, Հիւզոն իւրացնում է 1Կր 2, 14-15 հատուածում ներկայացուած զանազանութիւնը, ուր Պօղոս Առաքեալը «շնչաւոր» է անուանում այն մարդկանց, որոնք փակուած են մնում իրենց արարածական վիճակի մէջ, այսինքն՝ մտածում են իրենք իրենց համաձայն, եւ ոչ թէ՛ ըստ Աստծոյ: Մինչ ընդհակառակն, «հոգեւոր» է անուանում այն մարդկանց, որոնք իրենց արարած լինելու փաստն ընդունում եւ ապրում են Արարչի հետ հաղորդակցութեան մէջ, այդպիսով ընդունակ դառնալով ընկալելու Աստծոյ իրականութիւնների իմաստը, ընդունակ դառնալով մտածելու ըստ Աստծոյ չափանիշների:  
<sup>4</sup> 1Կր 2, 14  
<sup>5</sup> 1Կր 2, 15

իրողութիւնն է յիշում այս գործն արդէն կատարած լինելը, եւ խոստանում է՝ թէ շարունակելու է կատարել նաեւ ապագային. «Յիշեցի անցեալ օրերը, խորհրդածեցի բոլոր գործերիդ շուրջ, եւ տակաւին մտածելու եմ հրաշալիքներիդ մասին»<sup>1</sup>: Իսկ նրանց՝ ովքեր չեն ճանաչում իրենց Արարչին եւ Աստծուն պարտական պաշտամունքը մատուցում են կռուքերին, Եսայիի մարգարէութիւնում գրուած է. «Ո՞վ է չափում ջրերն իր ափով, եւ թզով՝ երկնքի ընդարձակութիւնը: Ո՞վ է երեք մատներից կախուած պահում երկրի զանգուածը, կշռում լեռները կշեռքով եւ դաշտերը՝ նժարով: Նա՛ որ նստած է երկրագնդի վրայ, մինչ վերջինիս բնակիչները թւում են մարախ. Նա՛ որ երկինքը սփռում է որպէս քօղ եւ տարածում ինչպէս վարագոյր»<sup>2</sup>: Եւ կրկին Սաղմոսերգուն, յանդիմանելով կռուքեր երկրպագողներին, ասում է. «Ժողովուրդների բոլոր աստուածները կեղծ աստուածներ<sup>3</sup> են: Տէրն է ստեղծել երկինքները»<sup>4</sup>: Ի՞նչ էք մտածում, ուրեմն, ի՞նչ է նշանակում այս փաստը, որ ճշմարիտ աստուածութիւնը հաստատելու գործում՝ Աստծոյ գործերը տեղադրուած են մէջտեղում եւ ասում է. «Տէրն է, մինչդեռ, ստեղծել երկինքները», եթէ ոչ միայն այն՝ որ ուղղամտութեամբ քննուած արարչութիւնը մարդուն ցոյց է տալիս իր Արարչին: Մենք նոյնպէս թող որ տեսնենք՝ թէ քանիցս մեծ են Աստծոյ հրաշագործութիւնները, եւ ստեղծուած գոյութիւնների գեղեցկութեան միջոցով փնտռենք այն գեղեցիկը, բոլոր գեղեցիկների մէջ այն ամենագեղեցիկը, որն այնքան հրաշալի ու աննկարագրելի է, որ կարճ տեւողութիւն ունեցող որեւէ գեղեցկութիւն, թէկուզեւ ճշմարիտ լինի, չի կարող համեմատուել նրա հետ: ...

*Խօսեցինք – ինչպէս որ կարողացանք, ո՛չ թէ ինչպէս որ պարտական էինք – արարածների վիթխարի բազմաքանակութեան եւ գեղեցկութեան մասին: Մեզ մնում է այժմ անցնել քննելու նրանց օգտակարութիւնը:*

## դ) Օգտակարութիւնը

Արարուած բոլոր գոյութիւնների օգտակարութիւնը կայանում է չորս յատկութիւնների մէջ. անհրաժեշտները, յարմարաւէտները, պատշաճները եւ հաճելիները: Արարածներից իւրաքանչիւրին անհրաժեշտ է այն՝ առանց որի չի կարող պահպանել իր գոյութիւնը, ինչպէս մարդու սնուցման համար անհրաժեշտ են հացն ու ջուրը, հագուստի համար՝ բուրդը, կաշին կամ նմանատիպ միւս բոլոր զգեստները: Յարմարաւէտ է այն, որը թէեւ երբեմն պարգեւում է առաւել հաճոյք, այնուամենայնիւ անհրաժեշտ չէ կեանքի համար, ինչպէս մարդու սնուցման պարագային մի բաժակ գինին եւ մսեղէնները, հագուստի համար՝ բեհեզն ու մետաքսը, կամ նմանատիպ փափուկ կերպասները: Վայել կամ պատշաճ է այն, որը թէեւ ոչնչով չի նպաստում կեանքին, այնուամենայնիւ գործածուում է, ինչպէս կտորների գոյները, թանկարժէք քարերը եւ նմանօրինակ միւս բոլոր առարկաները: Հաճելի է այն, որը թէեւ յարմար չէ գործածութեան համար, այնուամենայնիւ հաճելի է տեսութեանը, ինչպիսիք են թերեւս բոյսերի, կենդանիների, թռչունների, ձկների եւ ուրիշ նման արարածների որոշ տեսակները:

Բայց արդ իրաւացի եւ կարեւոր է հարցնելը՝ թէ Աստուած ինչո՞ւ է կամեցել ստեղծել այսքան արարածներ, որոնք գիտէր՝ թէ ոչնչով անհրաժեշտ չէին լինելու մարդու գործածութեանը, քանի որ ամէն բան ստեղծել է մարդու համար: Բայց սա հնարաւոր է բաւականին շուտով հասկանալ եւ ըմբռնել, եթէ մեր ուշադրութիւնը կենտրոնացնենք այն պարագայի վրայ՝ թէ ինչու եւ ինչպէս է ստեղծուել մարդն ինքը:

<sup>1</sup> Սղմ 143, 5

<sup>2</sup> Ես 40, 12.22

<sup>3</sup> «Կեղծ աստուածներ» արտայայտութեան փոխարէն, բնագիրն ունի բառացիօրէն «դեւեր են» արտայայտութիւնը:

<sup>4</sup> Սղմ 96, 5

Աստուած մարդուն ստեղծել է իր համար, իսկ միւս բոլոր արարածներն հասցէագրուած են մարդուն: Մարդուն ստեղծել է իր համար. ո՛չ թէ որովհետեւ մարդու կարիքն ունէր, այլ որպէսզի վայելելու տար մարդուն, որին լաւագոյն ուրիշ ոչինչ չէր կարող տալ, քան ինքն իրեն. միւս արարածները, մինչդեռ, ստեղծուել են այնպիսի վիճակում, որ ենթակայ են մարդուն եւ մարդու ծառայութեան մէջ են, օգտակար լինելու համար նրան: Մարդը, հետեւաբար, մէջտեղում տեղադրուած, իրենից վեր ունի Աստծուն եւ իրենից վար՝ աշխարհը, եւ մինչ մարմնով միացած է ստորին աշխարհին, հոգիով վերամբարձած է դէպի Աստուած: Տեսանելի արարածները ստեղծուած եւ կանոնաւորուած են այնպէս, որ իրենից դուրս գտնուող առարկաներից մեկնելով՝ մարդը կարող է ճանաչել այն անտեսանելի բարիքը, որը պարտաւոր է փնտռել իր ներսում. այսինքն՝ որպէսզի իր ներքեւում տեսնի այն՝ ինչին որ պարտաւոր է ջանալ հասնել իրենից վեր: Լաւ չէր լինի, հետեւաբար, եթէ տեսանելի գոյութիւնների մեծ քանակութիւնը թերի լինէր իր մասերից որեւէ մէկում, քանի որ ստեղծուել է ճիշտ այս նպատակի համար. որպէսզի աւետի յաւիտենական բարիքների առատ ու անգնահատելի հեղումը:

Սա է պատասխանը այն հարցի, որը նախապէս դրել էինք մեր առաջ. ինչո՞ւ, այսինքն, Աստուած կամեցել է ստեղծել գոյութիւններ, որոնք գիտէր՝ թէ ոչնչով անհրաժեշտ չէին լինելու մարդու գործածութեանը: Եթէ, իրօք, պարզեւած լինէր միայն անհրաժեշտները, ճիշտ է՝ բարի կը լինէր, բայց ո՛չ հարուստ: Անհրաժեշտների վրայ աւելացնելով նաեւ յարմարաւէտները, ցոյց է տալիս իր բարութեան հարստութիւնները: Ապա, յարմարաւէտներին աւելացնելով նաեւ պատշաճները, ցոյց է տալիս իր բարութեան հարստութիւնների առատութիւնը: Իսկ երբ պատշաճներին կցում է նաեւ հաճելիները, ուրիշ ի՞նչ է տալիս մեզ ճանաչելու, եթէ ոչ միայն՝ իր բարութեան հարստութիւնների գերառատութիւնը:

Այս բաները, որոնք հակիրճ կերպով ասացինք արարածների օգտակարութեան մասին, թող որ բաւարար լինեն: Բայց հաճելի է մեզ, աւելացնելու համար աստուածային փառատրութիւնը, խորհրդածել այն սքանչելի կերպի շուրջ, որով Աստուած իր գործերում միաժամանակ պահպանում է այս երեք իրողութիւնները: Բայց թէ որքան է սա արժանի հիացման, կարող ենք առաւել դիւրութեամբ ճանաչել, եթէ նախ քննենք այն փաստը՝ որ մարդու գործերում այս երեք իրողութիւնները չեն կարող միաժամանակ ներկայ լինել:

## ե) Զօրութիւնը, գեղեցկութիւնն ու օգտակարութիւնը մարդու եւ Աստծոյ գործերում

Երբ մարդն, իրօք, ցանկանում է շատ բան անել, արդիւնքում գործերից ոչ մէկը մեծ չի լինում, որովհետեւ այնքան աւելի նուազ յաջողութիւն է ունենում գործերից իւրաքանչիւրի պարագային, որքան աւելի է բազմապատկում թիւն այն գործերի՝ որոնց վրայ պէտք է բաժանի իր ջանքն ու ուշադրութիւնը: Միւս կողմից, երբ աշխատում է գործերի մեծութեան համար, խոչընդոտների է հանդիպում նրանց թուի պատճառով, քանի որ ի զօրու չէ բազում գործերի մէջ ներդնելու այն ուժերը, որոնք յատուկ կերպով բանեցնում է մէկ միակ արդիւնքի համար: Նմանապէս, մարդը կարող է իր գործերից մէկի գեղեցկութեանը նուիրուել նուազ բծախնդրութեամբ, երբ հոգին մտահոգ է արտադրելու առաւել մեծ քանակ: Տեսնում ենք՝ թէ ինչպէս է գրագիրը մեծագոյն արագութեամբ շարագրում մանրաչափ տառերը, մինչ խոշոր տառերով գրելու պարագային քրտնում է առաւել հոգատարութեամբ, որովհետեւ որքան աւելի արագ է սահեցնում գրիչը՝ այնքան աւելի տգեղ է ստացւում գրութիւնը: Այսպիսով, յաճախ, մարդու գործերում գեղեցկութիւնը նուազեցնում է օգտակարութիւնը, իսկ օգտակարութիւնը խանգարում է գեղեցկութեանը: Այսպիսին է նաեւ հազուատների կարման պարագան. ովքեր չափազանց սիրահար են գեղեցկութեանը, կորցնում են գործնականութիւնը, մինչ ովքեր փափաքում են պահպանել գործնականութիւնը, միաժամանակ չեն ստանում նաեւ փափաքուած գեղեցկութիւնը:

Աստծոյ գործերում, մինչդեռ, ո՛չ վիթխարի քանակն է ինչ որ մի բան խլում որակից, ո՛չ որակն է սեղմում քանակը, ո՛չ քանակն ու մեծութիւնը միասին վնասում են գեղեցկութեանը, եւ ո՛չ էլ գեղեցկութիւնը բացառում է օգտակարութիւնը, այլ բոլոր

արարածները ստեղծուած են այնպէս՝ որ – կարծես թէ իւրաքանչիւրը միմիայն ինքը ստեղծուած լինէր – երբ նրանց քննուած ենք իրենց ամբողջութեան մէջ, կարողանում ենք իւրաքանչիւր գործով գմայրուել առանձին առանձին: ...

Տեսանելի իրականութիւնների շուրջ քննարկումները վերջացնելով, ուրեմն, արդ պէտք է որ տեսնենք՝ թէ ինչպիսի կարգով ու կերպով ենք նրանց միջոցով բարձրանում դէպի անտեսանելիները:

#### գ) Բաւական արարածը յայտնում է եռանուն մէկ Աստուծու

... Քանի որ նախապէս տեսանելի իրականութիւններից հայեցողութեան աչքով անցանք անտեսանելիներին, քննութեան ճանապարհով հասանք այս կէտին. այլեւս չպէտք է տարակուսենք, որ բոլոր գոյութիւնների Արարիչն անսկիզբ է, անվախճան, անփոփոխելի. եւ սա գտանք ո՛չ թէ մեզնից դուրս, այլ մեր ներսում<sup>1</sup>: Հետեւաբար տեսնենք, հնարաւորին չափ ընդարձակ կերպով, թէ մեր այս մարդկային բնութիւնն արդեօք տակաւին ինչ որ մի բան աւելի ուսուցանո՞ւմ է մեզ մեր Արարչի մասին, քանի որ թերեւս կարող է բացայայտել Նրան ոչ միայն որպէս մէկ, այլ նաեւ՝ եռանուն:

Անկասկած, բանականութեամբ օժտուած միտքը մէկ միակ է եւ ինքն իրենից ծնում է իմացականութեանը: Միտքը՝ մէկ, իմացականութիւնը՝ մէկ: Իսկ երբ երբեմն անդրադառնում է, թէ իրենից ծնուած տուեալ մտածութիւնը որքան նուրբ է, որքան ճշմարիտ, որքան պատշաճ, որքան ուրախալի, իսկոյն սիրում է այն եւ վերջինս հաճելի է լինում իրեն: Տեսնում է եւ միաժամանակ հիանում, եւ զարմանում է՝ թէ ինչպէս կարողացաւ մի այդպիսի բան մտածել: Սաստիկ ուրախանում է, նրան շարունակ հայելով, շարունակ ունենալով, շարունակ վայելելով, նրանում շարունակ բերկրալով: Վերջինս հաճելի է իրեն ինքնըստինքեան, հաճելի է ինքն իր պատճառով, ո՛չ էլ կայ ուրիշ ինչ որ մի բան՝ որ փափաքում է փնտել նրանից դուրս, որովհետեւ ամէն բան սիրում է նրանում: Նրանում, ճշմարտութեան հայեցողութիւնը հաճելի է տեսնելու, քաղցր է՝ ունենալու, ախորժելի է՝ վայելելու համար: Նրա հետ, միտքը հանգստանում է ինքն իր հետ, բայց իր ներաշխարհում երբեք չի ենթարկւում ճանճրոյթի պատճառած նեղութիւններին, որովհետեւ միայն մէկ փեսայից, այո՛, բայց միայնակ չէ ուրախացած:

Ուշադրութիւն դարձրու, ուրեմն, այս երեք իրականութիւնների վրայ. միտքը, իմացականութիւնը, սէրը<sup>2</sup>: Մտքից ծնում է իմացականութիւնը. մտքից եւ իմացականութիւնից միասին ծնում է սէրը: Միայն մտքից՝ իմացականութիւնը, որովհետեւ միտքն իմացականութեանը ծնում է ինքն իրենից մեկնելով: Սէրը, սակայն, չի բխում ո՛չ միայն մտքից, ո՛չ էլ միայն իմացականութիւնից, այլ՝ երկուսից: Նախ՝ միտքը, ապա՝ միտքն ու իմացականութիւնը, վերջում՝ միտքը, իմացականութիւնն ու սէրը: Իրօք այսպէս է պատահում մեզնում: Արարչի պարագային, մինչդեռ, բանականութիւնը մեզ համոզում է, որ իրականութիւնն ամբողջովին տարբեր է: Քանի որ հաւատում ենք, որ Նա միշտ գոյութիւն է ունեցել, նմանապէս դաւանում ենք, որ միշտ ունեցել է իմաստութիւնը: Եթէ, յիրաւի, ասուի՝ թէ մի ժամանակ Նա գոյութիւն է ունեցել առանց իմաստութեան, անհնարին է գտնել՝ թէ հետագայում ով է Նրան իմաստուն դարձրել կամ թէ ումից է ստացել իմաստութիւնը: Ո՛չ միայն, այլ բացարձակ կերպով անտրամաբանական եւ բանականութիւնից ամբողջովին զուրկ մի բան է, որ Նա՝ ով աղբիւրն ու սկիզբն է իմաստութեան, մի ժամանակ գոյութիւն ունեցած լինի առանց իմաստութեան: Միշտ, հետեւաբար, իմաստութիւնը Նրանում է: Իմաստութիւնը միշտ

<sup>1</sup> Այդ ընդարձակ հատուածը, որի մասին Հիւզոն խօսում է այստեղ, չենք թարգմանել: Հիմնականում իրենից ներկայացնում է ճանաչողութեան որոշ ուղիներ առաջարկելու մի փորձ, մեկնելով արարչութեան շուրջ որոշ քննարկումներից, որոնց միջոցով կարելի է հասնել Աստուծոյ գոյութեան եւ Նրա ստորոգելիներից ոմանց ճանաչմանը:

<sup>2</sup> Մարդու ներաշխարհի եւ Աստուծոյ միջեւ այստեղ ներկայացուած համապատասխանութիւնը ներշնչուած է Սբ. Օգոստինոսի խորհրդածութիւններից, որոնք Մեծ Հայրապետը գրի է առել յատկապէս Երրորդութեան մասին իր աշխատութիւնում: Հմմտ. De Trinitate 15, 23, 43-44.

Նրանում է եղել, որովհետեւ Նա միշտ ունեցել է իմաստութիւնը, միշտ եղել է իմաստուն: Իմաստութիւնը միշտ Նրանից է եղել, որովհետեւ իմաստութիւնը՝ որ Նա ունի, Ինքն իսկ է ծնել: Իմաստութիւնը միշտ Նրա հետ է եղել, որովհետեւ Նա՝ որ ծնուած է, երբեք չի բաժանուում Նրանից՝ ով ծնել է Իրեն: Ի յաւիտենից ծնուած է եւ յաւիտեան ծնուում է. երբ ծնուում է՝ չունի սկիզբ, երբ ծնուած է՝ չունի վախճան. միշտ ծնուում է, որովհետեւ յաւիտենական է. միշտ ծնուած է, որովհետեւ կատարեալ է:

Կայ, ուրեմն, մէկը՝ որ ծնուած է, եւ կայ մէկը՝ որ ծնում է: Նա՝ ով ծնում է, Հայրն է. Նա՝ ով ծնուած է, Որդին է: Եւ քանի որ Նա՝ ով ծնում է, ծնում է ի յաւիտենից, Հայրը յաւիտենական է: Եւ քանի որ Նա՝ ով ծնուած է, ծնուած է ի յաւիտենից, Որդին յաւիտենակից է Հօրը, յաւիտենական է: Նմանապէս, Նա՝ ով ի յաւիտենից ունի իմաստութիւնը, ի յաւիտենից սիրում է իմաստութիւնը: Նա, ապա, որ ի յաւիտենից սիրում է, ի յաւիտենից ունի սէրը: Եւ այսպիսով, սէրը յաւիտենակից է Հօրը եւ Որդուն, յաւիտենական է: Այնուամենայնիւ, Հայրը ոչ ոքից է, Որդին միմիայն Հօրից է, մինչ սէրը միասին Հօրից է եւ Որդուց:

Բայց քանի որ վերեւում հաստատեցինք, որ բոլոր գոյութիւնների Արարիչը բացարձակ կերպով եւ իսկապէս մէկ եւ միակ է, հարկ է դաւանել՝ որ այս երեք իրականութիւններն Աստծոյ մէջ գոյացապէս մէկ են: Քանի որ Նա՝ ով ծնուած է, չի կարող լինել Նա՝ ումից ծնուած է, եւ հաւասարապէս Նա՝ որ բխում է ծնողից եւ ծնուածից, չի կարող լինել ո՛չ Նա՝ ով ծնում է, ո՛չ էլ Նա՝ ով ծնուած է, ճշմարտութեան անդիմադրելի թելադրանքով հարկադրուած ենք աստուածութեան մէջ դաւանելու եռանձնութիւնը, իսկ գոյացութեան մէջ՝ մէկ միութիւնը: Մէկ միակ աստուածութեան մէջ, հետեւաբար, երեք Անձերին համընդհանուր է հաւասար յաւիտենականութիւնը եւ յաւիտենական հաւասարութիւնը, քանի որ իւրաքանչիւրի համար տարբեր չի կարող լինել այն՝ ինչը որ մէկ միակ աստուածութիւնը համընդհանուր է դարձնում բոլորի համար:

Երեքը, հետեւաբար, մէկ են, որովհետեւ երեք Անձերն ունեն մէկ միակ բնութիւն. բայց երեք միութիւններ չեն, որովհետեւ Անձերի զանազանութիւնը չի բաժանում աստուածութեան միութիւնը, այնպէս՝ ինչպէս աստուածութեան միութիւնը չի խառնում Անձերի զանազանութիւնը:

## Է) Միոյ փոխադարձութիւնն ու միութիւնը Երրորդութեան մէջ

Բայց հաճելի է ինձ տակաւին քննել, առաւել ուշադրութեամբ, թէ ինչ իմաստով է ասուում, որ Հայրը սիրում է Իր իմաստութիւնը: Մարդիկ, յիշաւի, յաճախ սովոր են սիրելու իրենց գիտութիւնը գործերի պատճառով, ո՛չ թէ գործերը գիտութեան պատճառով, այնպէս՝ ինչպէս որ կան գիւղատնտեսական գիտութիւններ, հիւսուածքեղէնի գիտութիւններ, գծագրութեան ու նկարչութեան գիտութիւններ եւ ուրիշ նմանօրինակներ, որոնցում գիտութիւնը բացարձակ կերպով անիմաստ է համարուում, եթէ իր գործերում չի ցուցաբերում օգտակարութեան պտուղներ: Սա եթէ վերաբերուէր նաեւ Աստծոյ իմաստութեանը, Արարչից անկասկած աւելի կը գերադասուէր արարածը: Այս իսկ պատճառով, հարկաւոր է ասել՝ որ իմաստութիւնը միշտ աւելի թանկարժէք է՝ քան իր գործերը, եւ որ իմաստութիւնը միշտ հարկաւոր է սիրել ինքն իր համար: Իսկ երբ երբեմն պատահում է, որ իմաստութիւնից աւելի են գերադասուում իր գործերը, սա տեղի է ունենում ո՛չ թէ ճշմարտութեան համաձայն, այլ մարդու սխալի պատճառով: Իմաստութիւնն, իրօք, կեանք է, իսկ իմաստութեան սէրը կեանքի երջանկութիւնն է: Այս իսկ պատճառով, երբ ասում ենք՝ որ Հայրը սիրում է Իր իմաստութիւնը, մեր մտքերից թող հեռու լինի կարծելը՝ թէ Աստուած Իր իմաստութիւնը սիրում է այն գործերի պատճառով, որոնք կատարում է նրա միջոցով, եւ ո՛չ թէ ընդհակառակն՝ Իր բոլոր գործերը սիրում է բացառապէս նրա պատճառով: Ահա սրա համար է ասում. «Սա՛ է իմ սիրեցեալ Որդին, որի մէջ է իմ ամբողջ բարեհաճութիւնը»<sup>1</sup>: Ո՛չ երկրի մէջ եւ ո՛չ երկնքում, ո՛չ արեւի մէջ կամ

<sup>1</sup> Մտթ 3, 17

լուսնի ու աստղերի, եւ ո՛չ իսկ հրեշտակների մէջ – որոնք արարածների մէջ ամենագերագանցներն են – որովհետեւ նաեւ այդ արարածները, թէեւ իւրաքանչիւրն իրեն յատուկ կերպով հաճելի է իրեն, այնուամենայնիւ չեն կարող հաճելի լինել իրեն, եթէ ոչ միայն՝ Որդու մէջ եւ Որդու միջոցով: Արարածներն, յիրաւի, այնքան աւելի արժանի են Աստծոյ սիրոյն, որքան աւելի են Նրան նմանուում: Աստուած սիրում է, հետեւաբար, ո՛չ թէ իմաստութիւնը գործերի, այլ գործերն իմաստութեան պատճառով: Նրանում են գեղեցկութիւնն ու ճշմարտութիւնը եւ Նա ամբողջովին առարկայ է փափաքելի, անտեսանելի լոյսն է եւ անմահ կեանքը, որի տեսութիւնն այնքա՛ն տենչալի է, որ ի գօրու է ուրախացնելու Աստծոյ աչքերը: Պարզ է, բայց կատարեալ. գեղուն չէ, այնուամենայնիւ՝ առատ է<sup>1</sup>. միակ, բայց ո՛չ միայնակ. մէկ եւ որ իրենում բովանդակում է բոլոր գոյութիւնները:

Բայց քանի որ հաւատում ենք երեք Անձերի մէկ աստուածութեանը, մնում է մեզ քննել՝ թէ այն, ինչ ասուում է Նրանցից իւրաքանչիւրի համար, հնարաւոր է ասել նաեւ միւսների համար:

Ասացինք, որ Հայրը սիրում է Որդուն: Հետեւաբար, մնում է մեզ քննել՝ թէ արդեօք նմանապէս կարելի՞ է ասել՝ որ Հօր եւ Որդու Սէրը սիրում է Որդուն եւ որ Որդին սիրում է ինքն իրեն: Նմանապէս, թէ արդեօք Հայրը սիրում է ինքն իրեն, Որդին սիրում է Հօրը, Հօր եւ Որդու Սէրը սիրում է Հօրը: Նմանապէս, թէ արդեօք Հօր եւ Որդու Սէրը սիրում է ինքն իրեն, Հայրը սիրում է իր եւ Որդու Սէրը, Որդին սիրում է իր եւ Հօր Սէրը: Վերջում, թէ արդեօք մէկ եւ միեւնոյնն է այն Սէրը, որով իւրաքանչիւրը սիրում է ինքն իրեն եւ իւրաքանչիւրը սիրում է միւսին փոխադարձաբար:

Բայց այս հարցերի պատասխանները կը գտնենք առաւել դիւրութեամբ, եթէ նախ վերստին մտաբերենք այն բաները, որոնք ասել ենք մինչեւ այժմ:

Մինչ այժմ ներկայացուած խորհրդածութիւններում հաստատեցինք, որ Աստուած առաջին պատճառն ու սկիզբն է բոլոր բարիքների: Եւ քանի որ ինքն է աղբիւրն ու սկիզբը բոլոր բարիքների, բարիքներից ոչ մէկը չի կարող իրենից գերագանց լինել: Աստուած, հետեւաբար, գերագոյն Բարիքն է: Երանութիւնն, ապա, կայանում է գերագոյն Բարիքի մէջ: Բայց ինչպէ՞ս կարող է երջանիկ լինել մէկը, որին տհաճ է այն՝ ինչ որ ինքն է: Նա, ուրեմն, ով երջանիկ է, սիրում է ինքն իրեն եւ սիրում է նաեւ այն՝ ինչ որ ինքն է: Եթէ, ուրեմն, Հայրը, Որդին եւ Հօր ու Որդու Սէրը մէկ են, նաեւ մէկ միակ Աստուած են. եւ քանի որ միմիայն Աստծոյ մէջ է իրական երանութիւնը, հարկաւոր է՝ որ Անձերից իւրաքանչիւրը սիրի ինքն իրեն եւ երեքը սիրեն միմեանց փոխադարձաբար: Յիրաւի, չենք կարող ճշմարտութեամբ կոչել երանութիւն – աւելին, դա կը լինէր գերագոյն դժբախտութիւնը – եթէ հակառակամէտ կամքի պատճառով պառակտուելով հանդերձ, միեւնոյն բնութեան պատճառով չկարողանային մէկը միւսից բաժանուել:

Ինչպէս, հետեւաբար, Հայրը, Որդին եւ Հօր ու Որդու Սէրը բնութեամբ մէկ միակ են, այնպէս էլ մէկ միակ չեն կարող չլինել կամքի եւ սիրոյ մէջ: Մէկ միակ սիրով են սիրում միմեանց, որովհետեւ մէկ միակ բնութիւն են. այն՝ ինչը որ իւրաքանչիւրը սիրում է միւսի Անձում, տարբեր չէ նրանից՝ ինչը որ իւրաքանչիւրը սիրում է ինքն իր մէջ, որովհետեւ այն՝ ինչ որ է իւրաքանչիւրը, առաջացած չէ մի սկզբունքից, որը տարբերում է այն սկզբունքից՝ որից առաջացել են միւսները: Այն՝ ինչ Հայրը սիրում է Որդու Անձում, Որդին սիրում է ինքն իր մէջ. եւ այն՝ ինչ Հօր եւ Որդու Սէրը սիրում է Որդու Անձում, Որդին սիրում է ինքն իր մէջ: Նմանապէս, այն՝ ինչ Որդին սիրում է Հօր Անձում, Հայրը սիրում է ինքն իր մէջ. եւ այն՝ ինչ Հօր եւ Որդու Սէրը սիրում է Հօր Անձում, Հայրը սիրում է ինքն իր մէջ: Նմանապէս, այն՝ ինչ Հայրը եւ Որդին սիրում են իրենց Սիրոյ Անձում, Հօր եւ Որդու Սէրը սիրում է ինքն իր մէջ: Նմանապէս, այն՝ ինչ Հայրը սիրում է ինքն իր Անձում, նոյնը սիրում է Որդու եւ իր Սիրոյ մէջ: Եւ այն՝ ինչ Որդին սիրում է

<sup>1</sup> «Զեղուն» եզրով հեղինակն արտայայտում է միտքը շատ լցուած բաժակի, որի պարունակութիւնը սկսում է թափուել տեղի բացակայութեան պատճառով: Տուեալ պատկերով Հիւզոն կամենում է հասկացնել, որ իմաստութիւնը երբեք չափազանց չէ, այլ միշտ առատ է եւ լիացնող, գոհացնող, որ սակայն երբեք չի բռնանում իրեն ունեցողի վրայ:

Ինքն իր Անձում, նոյնը սիրում է Հօր եւ իր Սիրոյ մէջ: Եւ այն՝ ինչ Հօր եւ Որդու Սէրը սիրում է Ինքն իր Անձում, նոյնը սիրում է Հօր եւ Որդու մէջ:

Ունկն դիր, թէ արդեօք Հօր ձայնը նոյնպէս համաձայն է այն ամէնին՝ ինչ ասացինք. «Սա՛ է, – ասում է, – իմ սիրելի Որդին, որի մէջ է իմ հաճութիւնը»<sup>1</sup>: Ձի ասում պարզապէս. «Ես հաճելի եմ ինքս ինձ», ո՛չ էլ միայն. «Նա հաճելի է ինձ», այլ ասում է. «Նրանում է իմ հաճութիւնը», այսինքն. «Այն՝ ինչը որ հաճելի է ինձ իմ Անձում, Նրանում է, Նրանից դուրս չէ, որովհետեւ Նա այն է՝ ինչ որ ես եմ: Քանի որ Նրանից տարբեր մի բան չեմ, ինքս ինձ չեմ կարող հաճելի լինել Նրանից դուրս, որ իմ Որդին է, Սիրելին, որի մէջ է իմ հաճութիւնը: Որեւիցէ մի բան՝ որ հաճելի է ինձ, հաճելի է Նրանում եւ Նրա միջոցով: Նա, յիշուի, իմաստութիւնն է, որի միջոցով ստեղծեցի ամէն բան: Նրանում ի յաւիտենից նախասահմանեցի այն ամէնը՝ որ կատարելու էի ժամանակի մէջ: Եւ իմ գործերից իւրաքանչիւրն այնքան ակելի եմ սիրում՝ որքան ակելի կատարեալ կերպով եմ տեսնում՝ թէ համապատասխանում է առաջին սահմանմանը: Մի՛ կարծէք՝ թէ Նա միայն մարդկանց հետ հաշտութեան միջնորդն է, քանի որ Նրա միջոցով է՝ որ բոլոր արարածների գոյութիւնը հայեացքիս առջեւ դառնում է հաճոյ եւ թանկարժէք: Նա է չափանիշը, որի համաձայն գնահատում եմ կատարածս գործերը, եւ չեմ կարող չսիրել այն՝ ինչը որ տեսնում եմ նման Նրան՝ ում սիրում եմ: Ինձ տհաճ է միմիայն նա՝ ով հեռանում է Նրա նմանութիւնից: Եթէ կամենում էք, ուրեմն, հաճոյ լինել ինձ, նմանուեցէք Նրան, լսեցէք Նրան: Իսկ եթէ չար գործելով երբեւէ հեռացել էք Նրա հետ ունեցած նմանութիւնից, վերադարձէք դէպի Նա, հետեւելով իր ուսուցումներին<sup>2</sup>: Նրա միջոցով է տրուել պատուիրանը, Նրա միջոցով է տրուել խորհուրդը: Պատուիրանը, որպէսզի հաստատուն մնաք. խորհուրդը, որպէսզի վերադառնաք: Երանի՛ թէ պահած լինէիք պատուիրանը: Բայց քանի որ խախտել էք պատուիրանը, գէթ լսեցէք խորհուրդին, լսեցէք Նրան: Ձեր մօտ առաքեցի բարի խորհուրդի Հրեշտակին<sup>3</sup>, որպէսզի Նա՝ ով ստեղծուած իրականութիւններին տրուել էր փառքի հեռանկարով, նմանապէս լինի կորածների մօտ՝ որպէս փրկանք: Լսեցէք Նրան: Նա է Արարիչը, Նա է նաեւ Փրկիչը: Նա, որ Աստուած է իմ հետ միասին, ստեղծել է ձեզ. Նա, որ մարդ է ձեր հետ միասին, միայնակ եկաւ ձեր մօտ: Լսեցէք Նրան: Շա՛տ ակելի լաւ կը լինէր, եթէ միշտ պահպանած լինէիք Նրա հետ ունեցած ձեր նմանութիւնը, բայց արդ նուազ փառահեղ չի լինի վերադարձը՝ հետեւելու Նրան: Լսեցէք Նրան»:

## թ) Յորդոր ընթերցողին

Ո՛վ մարդ, ինչն՞ է ես որպէս չքմեղանք ներկայացնում անգիտութիւնդ: Ահա, քո բնութիւնն իսկ յանդիմանում է քեզ, համոզում է քեզ: Գիտես՝ թէ ով ես, որտեղից ես գալիս, ինչպիսի Արարիչ ունես, ինչպիսի միջնորդի կարիքն ունես, եւ տակաւին ինքդ քեզ պաշտպանելով՝ անամօթաբար աղաղակում ես Աստուծոյ դէմ: Գիտես, որ չար ես եւ որ չար չես ստեղծուել Արարչիդ կողմից, որ բարի է, եւ դեռ անշարժ ես մնում եւ չես աղաղակում դէպի Նա՝ ով ստեղծել է քեզ, որպէսզի գայ եւ վերանորոգի քեզ. դէպի Նա՝ ով ստեղծել է քեզ, որպէսզի փրկի քեզ: Մի՛ կասկածիր Նրա զօրութեան վրայ. տես՝ թէ քանիցս մեծ են Նրա գործերը: Մի՛ կասկածիր Նրա իմաստութեան վրայ. տես՝ թէ քանիցս գեղեցիկ են Նրա գործերը: Մի՛ կասկածիր Նրա բարութեան վրայ. տես՝ թէ ինչպէս են Նրա գործերը ենթարկուում քեզ, մինչեւ իսկ քեզ օգտակար լինելու աստիճան: Իր գործերի

<sup>1</sup> Մատթ 3, 17

<sup>2</sup> Բնագրում գործածուած եզրը, որն հայերէնում թարգմանեցինք «հետեւել ուսուցումներին», հարկաւոր է հասկանալ որպէս ուսուցումների ունկնդրում, որն հասնում է համաձայնութեանը, աշակերտելուն, հետեւորդութեանը, ուսուցչին գործնական գետնի վրայ նմանուելուն: Այս իմաստով, տուեալ եզրը (լատիներէն imitatio) շատ անգամներ է գործածուում քրիստոնէական հոգեկանութեան գրութիւններում:

<sup>3</sup> Հմմտ. Ես 9, 6

միջոցով, ուրեմն, Նա ցոյց է տալիս՝ թէ որքան հզօր է քեզ փրկելու համար, եւ հաւասարապէս ցոյց է տալիս՝ թէ որքան ահարկու է դատաւորը, որ կարող ես ունենալ՝ եթէ չընդունես Նրան որպէս Փրկիչ: Ոչ ոք չի կարող ընդդիմանալ Նրան, քանի որ ամենակարող է. ոչ ոք չի կարող խաբել Նրան, քանի որ գերագոյն աստիճանի իմաստուն է. ոչ ոք չի կարող կաշառել Նրան, քանի որ կատարեալ է. ոչ ոք չի կարող խուսափել Նրանից, քանի որ ամէնուր է. ոչ ոք չի կարող տոկալ Նրա առաջ, քանի որ յաւիտենական է. ոչ ոք չի կարող նուաճել Նրան, քանի որ անփոփոխական է: Եթէ, հետեւաբար, չենք կամենում ունենալ նմանատիպ դատաւորի փորձառութիւնը, շտապենք ունենալ Նրան որպէս մեր Փրկիչը:

## 2. <sup>2</sup> թ՞ ձա՞նք , <sup>3</sup>ա՞նք <sup>2</sup> թ՞ թ՞ ի՞նչ <sup>0</sup> ձա՞նք

Երբ, նախապէս, տեսանելի արարածներից մեկնելով յառաջացանք քննելու անտեսանելիները, նախեւառաջ մարմնեղէն արարածներից անցանք անմարմին, այսինքն՝ բանական արարածին, եւ ապա, բանական արարածից յետոյ, հասանք Աստծոյ իմաստութեանը: Այժմ, սակայն, ճանապարհը յետադարձ քայլելով, խորհրդածութեամբ յառաջանալու ենք նախ Աստծոյ իմաստութիւնից դէպի բանական արարածը, ապա՝ բանական արարածից դէպի մարմնեղէնները:

Առաջինը ճանաչողութեան կանոնն է ու հերթականութիւնը, երկրորդը կանոնն ու հերթականութիւնն է արարչութեան<sup>1</sup>: Ճանաչողութեան գործընթացքում նախեւառաջ հանդիպում ենք մարմնեղէն արարչութեանը, որը տեսանելի է. ապա, մարմնեղէն արարածներից ճանաչողութիւնն անցնում է անմարմիններին. վերջում, գտնելով փնտռութիւնը ուղին, հասնում է մինչեւ մարմնեղէնների ու անմարմինների Արարչին:

Արարչագործութեան մէջ, մինչդեռ, որպէս առաջին աստիճան ստեղծուել է բանական արարածը, ըստ Աստծոյ պատկերի: Ապա մարմնեղէն արարածները<sup>2</sup>, որպէսզի

<sup>1</sup> «Ճանաչողութեան կարգ» արտայայտութեամբ Հիւզոն կամենում է մատնանշել մարդկային ճանաչողութեան զարգացման ընթացքը. մարդն, իրօք, ճանաչողութեան ձեռքբերման համար միշտ մեկնում է արարածների ճանաչումից, ապա անցնում է ինքն իր ճանաչմանը եւ վերջում միայն հասնում է Արարչի ճանաչմանը: «Արարչութեան կարգ» արտայայտութեամբ, մինչդեռ, Հիւզոն ակնարկում է իրադարձութիւնների իրական, պատմական ընթացքին, ինչպէս որ դրանք պատմում են Մենդոց գրքում. նախ, այսինքն, գոյութիւն ունէր միայն Աստուած, որն ապա ստեղծել է մարդուն եւ միւս բոլոր գոյութիւնները: Մարդը, սակայն, հաստատում է Հիւզոն – խորհրդածութիւններով, որոնք յստակ կերպով ներշնչուած են Սբ. Օգոստինոսից – կարող է միմիայն յետադարձ ուղղութեամբ քայլել այս ճանապարհով. մեկնելով արարածներից, այսինքն, մարդը կարող է հասնել ինքնաճանաչմանը եւ ինքնաճանաչման միջոցով՝ Աստծոյ ճանաչողութեանը: Մարդն, իրօք, արարած լինելու իր վիճակին բնորոշ սահմանների պատճառով ի գօրու է իրականութիւնը քննելու Աստծոյ տեսաբանութիւնից մեկնելով – նոյնիսկ եթէ երբեմն, միշտ սակայն կարճ ժամանակով, նրան ի վերուստ շնորհում է ընկղմուելու աստուածային խորհրդածութիւնների հայեցողութեան մէջ – եւ չի կարող, հետեւաբար, ամէն բան լիակատար կերպով ճանաչել, այնպէս ինչպէս Աստուած ինքը ճանաչել եւ ստեղծել է ամէն բան արարչութեան ընթացքում:

<sup>2</sup> Հիւզոն այստեղ հետեւում է արարչագործութեան ընթացքին, այնպէս՝ ինչպէս պատմում է Մենդոց 2, 4-25 հատուածում: Արարչագործութեան առաջին պատմութեան մէջ, որը ներկայացուած է Մենդոց 1, 1 - 2, 4 հատուածում, Աստուած նախ ստեղծում է երկիրն ու տիեզերքը, ապա երկրորդ հանգրուանում միայն ստեղծում է մարդուն: Այսինքն, նախ «մարմնեղէն արարածները», յետոյ «բանական արարածը»: Երկրորդ պատմութեան հերթականութիւնը, որը նախ ներկայացնում է մարդու արարումը եւ յետոյ միայն միւս արարածներին, ի տարբերութիւն առաջինի՝ շատ աւելի լաւ է համապատասխանում Հիւզոնի խորհրդածութիւններին: Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել նաեւ այն կէտի վրայ, թէ ինչպէս է Հիւզոն իւրացնում Սբ. Օգոստինոսի կողմից մարդուն տրուած սահմանումը որպէս «բանական արարած», հետեւելով հայրախօսական այն մեկնաբանութեանը, որի համաձայն՝ բանականութեան գործածութեան կարողութիւնն է էական եւ յատուկ այն որակը, որը մարդուն տարբերում է միւս բոլոր արարածներից, ինչպէս նաեւ այն իրականութիւնն է, որի համար ասուում է թէ Աստուած մարդուն ստեղծեց ըստ իր պատկերի ու նմանութեան:

այս վերջինների միջոցով բանական արարածը կարողանայ իրենից դուրս ճանաչել այն՝ ինչը որ իր ներսում ստացել էր Արարչից:

Աստծոյ իմաստութեան մէջ է ճշմարտութիւնը, բանական արարածի մէջ՝ ճշմարտութեան պատկերը, մարմնեղէն արարածների մէջ՝ պատկերի ստուերը: Բանական արարածը ստեղծուել է Աստծոյ իմաստութեան համար, մարմնեղէն արարածները ստեղծուել են բանական արարածի համար: Այս իսկ պատճառով, մարմնեղէն արարածների իւրաքանչիւր շարժումն ու զգացումը կողմնորոշուած է դէպի բանական արարածը, իսկ բանական արարածի իւրաքանչիւր շարժումն ու զգացումը պէտք է որ կողմնորոշուած լինի դէպի Աստծոյ իմաստութիւնը, որպէսզի ամէն բան, իւրաքանչիւրն իրեն յատուկ վիճակի շնորհիւ, միշտ յարելով նրան՝ որն իրենից վեր է, չխանգարի ո՛չ առաջին արարչութեան կարգը, ո՛չ էլ ինքն իր մէջ՝ նմանութիւնը առաջին բնօրինակի հետ:

Իւրաքանչիւր ոք, ուրեմն, որ քննութեան ուղիներով անցնում է տեսանելի իրականութիւններից անտեսանելիներին, պարտաւոր է նախեւառաջ իր մտքի հայեացքն ուղղել մարմնեղէն արարածներից դէպի բանական արարածը, ապա՝ բանական արարածից անցնել ամէնքի Արարչին: Վերադառնալով, ապա, անտեսանելի իրականութիւններից դէպի տեսանելիները, Արարչից նախեւառաջ իջնում է դէպի բանական արարածը, ապա՝ բանական արարածից անցնում է մարմնեղէն արարածներին:

Ճանաչողութեան կարգը, հետեւաբար, մարդկային մտքում միշտ կանխում է արարչութեան կարգին, որովհետեւ մենք՝ որ գտնուում ենք դրսում, չէինք կարողանայ ամենախորին իրականութիւններից դէպի արարածներն ընկած յետադարձ ճանապարհը կատարել, եթէ նախապէս մտովին չներթափանցէինք առաջինների մէջ: Արարչութեան կարգը գալիս է ճանաչողութեան կարգից յետոյ, որովհետեւ թէեւ մարդկային տկարութեանը երբեմն շնորհւում է գէթ մի քիչ հայել ներքին իրականութիւններին, իր չափազանց փոփոխականութեան պատճառով, սակայն, մարդն այդ վիճակում երկար ժամանակ մնալ չի կարողանում:

## Ժ) Արարչից դէպի բանական արարածը

Այն բանից յետոյ, ուրեմն, որ – որքանով Աստուած կամեցաւ պարգեւել մեզ – տեսանելի իրականութիւնների միջոցով հասանք անտեսանելիների ճանաչողութեանը, այժմ մեր միտքը թող որ վերադառնայ ինքն իր մէջ եւ ուշադրութիւնը կենտրոնացնի այն բանի վրայ՝ թէ ինչ օգտակարութիւն կարող է ստանալ այս ճանաչողութիւնից: Ինչի՞ է նպաստում, իրօք, Աստծոյ մեծութեան մեծվայելչութեան ճանաչումը, եթէ դրանից մեր համար չենք ստանում ոչ մի օգուտ: Բայց արդ, մինչ վերադառնում ենք աստուածային հայեցողութեան այդ գաղտնարաններից, ի՞նչ կարող ենք բերել մեր հետ: Ուրիշ ի՞նչ, եթէ ոչ միայն՝ լոյսը, քանի որ գալիս ենք լոյսի հայրենիքից: Սա իսկապէս պատճառ է անհրաժեշտ է. եթէ գալիս ենք լոյսի հայրենիքից, մեր հետ բերում ենք լոյսը, հալածելու համար խաւարը, որ մեզնում է: Եթէ լուսաւորուած չվերադառնանք, ո՞վ կարող է իմանալ՝ թէ եղել ենք այնտեղ: Թող բացայայտ լինի, ուրեմն, թէ այնտեղ եղել ենք. թող յայտնի լինի այն՝ ինչ տեսել ենք: Եթէ այնտեղ տեսել ենք զօրութիւնը, բերում ենք լոյսը Աստծոյ երկիւղի: Եթէ այնտեղ տեսել ենք իմաստութիւնը, բերում ենք լոյսը ճշմարտութեան: Եթէ այնտեղ տեսել ենք բարութիւնը, բերում ենք լոյսը սիրոյ: Զօրութիւնը թող երկնչելու մղի նրանց՝ ովքեր թմրած են. իմաստութիւնը թող լուսաւորի նրանց՝ ովքեր կուրացել են անգիտութեան խաւարում. բարութիւնը թող խանդավառի սառած հոգիները՝ սիրոյ ջերմութեամբ:

Ժա) Բա՛նաւկա՛ն արարածից դէպի մարմնեղէն արարածները.

ներքին օրերը եւ արտաքին օրերը

Խորհրդածեցէք հետեւեալ հարցի շուրջ, աղաչում եմ ձեզ. ի՞նչ է լոյսը, եթէ ոչ՝ օր. եւ ի՞նչ է խաւարը, եթէ ոչ՝ գիշեր: Եւ ինչպէս մարմնի աչքն ունի իր օրն ու իր գիշերը, այնպէս էլ սրտի աչքն ունի իր օրն ու իր գիշերը:

Երեքն են, հետեւաբար, անտեսանելի լոյսի օրերը, որոնց համաձայն հանգրուանների է բաժանուում հոգեւոր կեանքի ներքին ընթացքը: Առաջին օրը երկիւղն է, երկրորդը՝ ճշմարտութիւնը, երրորդը՝ սէրը: Առաջին օրն ունի իր արեւը. զօրութիւնն է: Երկրորդ օրն ունի իր արեւը. իմաստութիւնն է: Երրորդ օրն ունի իր արեւը. բարութիւնն է: Զօրութիւնը վերագրուում է Հօրը, իմաստութիւնը՝ Որդուն, բարութիւնը՝ Սուրբ Հոգուն:

Տարբեր են մեր օրերը, որ ունենք դրսում, նրանցից՝ որոնք ունենք մեր ներսում: Մեր արտաքին օրերն անցնում են, նաեւ այն ժամանակ՝ երբ մենք ինքներս չենք կամենում: Ներքին օրերը, մինչդեռ, եթէ կամենում ենք՝ կարող են մնալ յաւիտեան: Յիրաւի, Տիրոջ երկիւղի մասին գրուած է՝ թէ «մնում է յաւիտեանս յաւիտենից»<sup>1</sup>: Ծճարտութիւնը նոյնպէս, չկայ ոչ մի կասկած՝ թէ մնում է յաւիտեան, որովհետեւ թէեւ այս կեանքում արդէն ունենք նրա նշոյլների մի մասը, միմիայն յայնժամ է լինելու մեզնում լի ու կատարեալ. երբ, այս կեանքի վերջում, ճշմարտութիւնը մեր առջեւ կը յայտնուի բացայայտ կերպով: Սիրոյ մասին նոյնպէս գրուած է. «Սէրը վախճան չի ունենալու»<sup>2</sup>:

Լաւն են այս օրերը, որ չեն անցնում: Վատն են միւսները, որոնք ո՛չ միայն չեն մնում յաւիտեան, այլ չեն կարող մեր հետ մնալ նոյնիսկ կարճ ժամանակով: Այդ օրերի մասին Մարգարէի միջոցով ասուած է. «Մարդը խոտի նման է, իր օրերն անցնում են ինչպէս ստուերը»<sup>3</sup>: Սրանք են այն օրերը, որոնց արժանացաւ յանցանքը, մինչ միւսներն այն օրերն են, որոնք պարգեւեց մեզ շնորհը: Շնորհի օրերի մասին Մարգարէն ասում է. «Օրերիս ընթացքում դէպի Քեզ եմ աղաղակում»<sup>4</sup>, նա՛ որ ուրիշ տեղ ասել էր. «Գիշերով ոտքի եմ կանգնելու՝ խոստովանելու Քեզ»<sup>5</sup>: Իրօք, եթէ խօսում է միւս օրերի մասին, ինչո՞ւ Նրա անունը չէր կանչի նաեւ գիշերով: Բայց «իրենն» է անուանում այն օրերը, որովհետեւ չի սիրում միւսները, ինչպէս ասում է Երեմիան. «Տէր, Դու գիտես, չցանկացայ մարդու օրերը»<sup>6</sup>: Սրանք են այն օրերը, որոնցից կուշտ էր Յոբը, որի մասին գրուած է՝ թէ «մահացաւ տարիքն առած եւ օրերից կուշտ»<sup>7</sup>: Յիրաւի, միւս օրերից չէր կարող կուշտ լինել, քանի որ հազիւ անցած՝ այլեւս չկային:

Չարասիրտ մարդիկ ճանաչեցին միայն արտաքին օրերը: Բարեսիրտները, մինչդեռ, որոնք արդէն արժանացել են տեսնելու ներքին օրերը, ո՛չ միայն չեն սիրում արտաքին օրերը, այլ նաեւ նգովում են դրանք. «Անիծեալ լինի, – ասում էր երանելի Յոբը, – այն օրը՝ որում ծնուեցի եւ այն գիշերը՝ որում ասուեց. ”Ահա մի մարդ յղացուեց”»: Այդ օրը թող խաւարի փոխուի, Աստուած թող չփնտուի այդ օրն ի վերուստ եւ չլուսաւորի լոյսով»<sup>8</sup>:

<sup>1</sup> Սղմ 19, 10

<sup>2</sup> 1Կր 13, 8

<sup>3</sup> Սղմ 103, 15

<sup>4</sup> Սղմ 116, 2

<sup>5</sup> Սղմ 119, 62

<sup>6</sup> Եբմ 17, 16

<sup>7</sup> Յոբ 42, 17

<sup>8</sup> Յոբ 3, 3-4

Ժբ) Անտեսանելի լոյսի երեւոյթը

Այն օրերը, որոնք մեր ներսում են, դրանք են՝ որ պէտք է սիրենք: Նրանցում լոյսին չի յաջորդում խաւարը եւ յաւիտենական Արեւի շողարձակմամբ լուսաւորում են մաքուր սրտի ներքին աչքերը: Այս օրերի մասին է Սաղմոսերգուն գրում. «Օր ըստ օրէ աւետարանեցէք Նրա փրկութիւնը»<sup>1</sup>: Ո՞րն է Նրա կողմից պարգեւուած փրկութիւնը, եթէ ոչ՝ Յիսուս: «Յիսուս» իսկապէս նշանակում է փրկութիւն: Ահա այս պատճառով է նա կոչուում փրկութիւն. որովհետեւ իր միջոցով մարդը նորոգում է մինչեւ փրկութիւն: Նրա մասին Յովհաննէսը խօսում է, ասելով. «Օրէնքը Մովսէսի միջոցով տրուեց, շնորհն ու ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի»<sup>2</sup>: Նմանապէս, Պօղոս Առաքեալը Քրիստոս Յիսուսին կոչում է «Աստծոյ զօրութիւն եւ իմաստութիւն»<sup>3</sup>: Եթէ, ուրեմն, Յիսուս Քրիստոս Աստծոյ իմաստութիւնն է, եւ եթէ ճշմարտութիւնը յայտնուել է Յիսուս Քրիստոսի միջոցով, յստակ է՝ որ ճշմարտութիւնը յայտնուել է Աստծոյ իմաստութեան միջոցով:

Իմաստութեան օրն, ուրեմն, ճշմարտութիւնն է: Իր այս օրուայ մասին խօսելով, իմաստութիւնն ինքն ասում էր հրեաներին. «Աբրահամը, ձեր հայրը, ցնծութեամբ յոյսն ունէր տեսնելու իմ օրը. տեսաւ այն եւ ուրախացաւ»<sup>4</sup>: Աստծոյ ճշմարտութիւնն, իրօք, մարդկութեան փրկութիւնն է: Սա է ճշմարտութիւնը, որ նա նախապէս խոստացել էր: Իսկ երբ կատարեց խոստումը եւ պարգեւեց խոստացածը, ուրիշ ի՞նչ փաստեց, եթէ ոչ միայն՝ որ ճշմարտախօս է: Իմաստութեան միջոցով, ուրեմն, այս ճշմարտութիւնը հաւատարմութեամբ հասցուեց իր լիակատար իրազորմանը, Նրա կողմից՝ ումից որ բխում է ճշմարտութիւնը: Իսկ ճշմարտութեան իրազորման համար առաքուեց ճիշտ Նա՝ ում մէջ է ճշմարտութեան լիութիւնը: Ահա թէ ինչ է նշանակում, ուրեմն, որ Աբրահամը ցնծութեամբ յոյսն ունէր տեսնելու ճշմարտութեան օրը. փափաքում էր՝ որ ճշմարտութիւնն իրականանար: Այդ օրը նա անշուշտ տեսաւ մտովին<sup>5</sup>, երբ հասկացաւ՝ որ Աստծոյ Որդին մարմնանալու էր մարդկութեան փրկութեան համար:

Ասենք, ուրեմն. «Օր ըստ օրէ աւետարանեցէք Նրա փրկութիւնը»<sup>6</sup>: Երկրորդ օրն՝ առաջին օրից՝ երրորդ օրուան: Ըճմարտութեան օրը՝ երկրորդ օրից՝ սիրոյ օրուան: Սկզբում կար միայն մէկ օր. երկրորդ օրը: Ապա եկաւ երկրորդը. ճշմարտութեան օրը: Բայց նրան աւելացաւ, ո՛չ թէ փոխարինեց, որովհետեւ առաջինը ջնջուած չէ: Ահա երկու օրեր. որոնք, սակայն, երրորդ օրուայ հեռանկարով են. սիրոյ օրը: Բայց այս վերջինը նոյնպէս, երբ եկաւ, չջնջեց նախորդ երկուսը: Երջանի՛կ են այս օրերը: Այս օրերով մարդիկ կարող են իսկապէս կուշտ լինել, որովհետեւ մինչ յաջորդները հասնում են՝ նախորդները չեն անցնում, եւ մինչ աւելանում է նրանց թիւը՝ աճում է նրանց փառքի պայծառութիւնը:

Մարդիկ, մեղքի ծանրութեան ներքոյ կքուած, նախեւառաջ յանդիմանուեցին օրէնքի միջոցով եւ սկսեցին երկնչել դատաւոր Աստծուց, քանի որ մեղանչել էին: Նրանից երկնչել, ուրեմն, նշանակում է մի քիչ ճանաչել Նրան, որովհետեւ անշուշտ չէին կարող երկնչել Նրանից, եթէ Նրան չճանաչէին: Նրան ճանաչել սկսելն արդէն որոշ չափով լոյս էր, արդէն իսկ օր էր, բայց ո՛չ տակաւին պայծառ, որովհետեւ դեռեւս մթազնած էր մեղքի խաւարով: Յետոյ եկաւ փրկութեան օրը, կործանելու համար մեղքը, պայծառացնելու համար առաջին օրուայ լոյսը. ո՛չ թէ երկրորդը ջնջելու, այլ այն լաւագոյնի փոխելու համար: Բայց տակաւին լիակատար չէր լոյսը, քանի դեռ ճշմարտութեանը չէր միացել նաեւ սէրը: Յիրաւի, նոյն ինքն ըճմարտութիւնն ասում է. «Շատ բաներ ունեմ ձեզ ասելիք, բայց այժմ չէք կարող տանել դրանց ծանրութիւնը: Այլ երբ կը գայ

<sup>1</sup> Սղմ 96, 2  
<sup>2</sup> Յվհ 1, 17  
<sup>3</sup> 1Կր 1, 24  
<sup>4</sup> Յվհ 8, 56  
<sup>5</sup> Բառացի՝ «իր հոգու մէջ»:  
<sup>6</sup> Սղմ 96, 2

ճշմարտութեան Հոգին, կ'ուսուցանի ձեզ ամբողջ ճշմարտութիւնը»<sup>1</sup>: Ամբողջ ճշմարտութիւնն, ուրեմն, ե՛լ մէջտեղից վերացնելու համար բոլոր չարիքները, ե՛լ նորոգելու համար բոլոր բարիքները:

Ահա, կան երեք օրեր. երկիւղի օրը, որ բացայայտում է չարիքը. ճշմարտութեան օրը, որ կործանում է չարիքը. սիրոյ օրը, որ վերադարձնում է բարիքը: Ծճմարտութեան օրը լուսաւորում է երկիւղի օրը. սիրոյ օրը լուսաւորում է ե՛լ երկիւղի օրը ե՛լ ճշմարտութեան օրը, մինչեւ որ սէրը կատարեալ չի լինի, մինչեւ որ ամբողջ ճշմարտութիւնը կատարեալ կերպով բացայայտուած չի լինի, իսկ պատժի երկիւղը վերափոխուած չի լինի յարգանքի երկիւղի: «Աւետարանեցէք, – ուրեմն, – օր ըստ օրէ Նրա փրկութիւնը»<sup>2</sup>: Այս օրերի մասին է գրում Ովսէէ Մարգարէն. «Երկու օր յետոյ վերստին կը տայ մեզ կեանքը. երրորդ օրը մեզ ոտքի կը կանգնեցնի»<sup>3</sup>: Լսեցինք, իսկապէս, թէ ինչպէս Տէրն մեր Յիսուս Քրիստոս, երրորդ օրն յարութիւն առնելով, մեզ՝ մեռածներս վերստին պարգեւեց կեանքն իր Անձում եւ մեզ ոտքի կանգնեցրեց: Լսեցինք եւ ուրախացած ցնծացինք:

Բայց նաեւ մեծապէս արժանավայել է, որ փոխհատուցենք Նրանից ստացած բարիքները եւ ինչպէս որ մենք յարութիւն առանք իր մէջ, որ յարութիւն առաւ երրորդ օրը, այնպէս էլ մենք, իր փոխարէն եւ իր միջոցով երրորդ օրը յարութիւն առնելով, յարութիւն տանք իրեն մեր մէջ: Սակայն չպէտք է կարծենք, թէ Նա կամենում է՝ որ հատուցենք իրեն այն բանի փոխարէն՝ որին ինքն առաջինը լինելով կամեցաւ մասնակից դարձնել մեզ: Ինչպէս որ, հետեւաբար, իր մէջ եւ իր միջոցով մեր փրկութիւնն իրագործելու համար կամեցաւ ունենալ երեք օրեր, այնպէս էլ մեզ, որպէսզի իր միջոցով մեր մէջ իրագործէինք մեր փրկութիւնը, տուեց երեք օրեր: Բայց քանի որ այն ամէնն՝ ինչ իր մէջ կատարուեց, եղաւ ո՛չ միայն դարման, այլ նաեւ օրինակ եւ խորհուրդ, անհրաժեշտ եղաւ՝ որ այդ ամէնը կատարուէր դրսում, տեսանելի կերպով, որպէսզի կարողանար նշանը լինել այն բանի՝ որը մեզնում կատարուելու էր անտեսանելիօրէն: Իր օրերը, հետեւաբար, արտաքին էին, մինչ մեր օրերը հարկաւոր է փնտռել ներսում:

Երեք օրեր, ուրեմն, ունենք մեր ներաշխարհում, որոնցով մեր հոգին լուսաւորում է: Առաջին օրուան է պատկանում մահը, երկրորդին՝ թաղումը, երրորդին՝ յարութիւնը: Առաջին օրը երկիւղն է, երկրորդը՝ ճշմարտութիւնը, երրորդը՝ սէրը: Երկիւղի օրը զօրութեան օրն է, Հօր օրը: Ծճմարտութեան օրը իմաստութեան օրն է, Որդու օրը: Սիրոյ օրը բարութեան օրն է, Սուրբ Հոգու օրը:

Հօր օրը, Որդու օրը եւ Սուրբ Հոգու օրը՝ աստուածութեան փառքի մեծվայելչութեան մէջ մէկ միակ օր են, բայց մեր միտքը լուսաւորելու գործում կարծես իր սեփական մէկ օրն ունի Հայրը, մէկ օր՝ Որդին, մէկ օր՝ Սուրբ Հոգին: Ո՛չ թէ այնպէս, որ կարծենք՝ թէ Երրորդութիւնը, որն անբաժանելի է ըստ բնութեան, կարող է բաժանուել գործունէութեան ասպարէզում, այլ հնարաւոր է դառնում ըմբռնել Անձերի տարբերումը գործունէութեան տարբերութիւնից:

Երբ Աստծոյ ամենակարողութիւնը, մեր կողմից ուշադիր քննուելով, մեր սրտում արթնացնում է հիացումը, սա Հօր օրն է: Երբ Աստծոյ իմաստութիւնը, մեր կողմից ջանասիրութեամբ խուզարկուելով, լուսաւորում է մեր սիրտը ճշմարտութեան ճանաչողութեամբ, սա Որդու օրն է: Երբ Աստծոյ բարութիւնը, մեր կողմից զգուշութեամբ պահուելով, բոցավառում է մեր սիրտը սիրոյ կրակով, սա Սուրբ Հոգու օրն է: Զօրութիւնը ներշնչում է երկիւղ, իմաստութիւնը լուսաւորում է, բարութիւնը՝ բերկրանքով լիացնում: Զօրութեան օրը, երկիւղի պատճառով, մահանում ենք: Իմաստութեան օրը, ճշմարտութեան հայեցողութեան շնորհիւ, թաղում ենք այս աշխարհի ժխորին:

<sup>1</sup> Թվհ 16, 12-13

<sup>2</sup> Սղմ 96, 2

<sup>3</sup> Ովս 6, 2

Բարութեան օրը, սիրոյ եւ երկնային բարիքների փափաքի միջոցով, յարութիւն ենք առնում: Ճիշտ այս պատճառով է, որ Քրիստոս մահացաւ վեցերորդ օրը, գերեզմանում մնաց եօթներորդ օրը, յարութիւն առաւ ութներորդ օրը. որպէսզի, նմանապէս, նախ զօրութիւնն, իր օրուայ ընթացքում, երկիւղով արտաքինից սպանի մեզ մարմնական ցանկութիւնների համար. ապա իմաստութիւնն, իր օրուայ ընթացքում, մեր ներսում թաղի մեզ հայեցողութեան գաղտնարաններում. եւ վերջում՝ բարութիւնն, իր օրուայ ընթացքում, աստուածային սիրոյ բաղձանքով յարութիւն տայ մեզ վերստին կենդանացած: Որովհետեւ վեցերորդ օրուանն է յոգնութիւնը, եօթներորդինն է հանգիստը, ութներորդինը՝ յարութիւնը:

